

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Ազգիս Վեհափառ Հայրապետի ուղղած հեռագիրներն իւր պատրիարքներին եւ Կիլիկիոյ Կաթուղիկոսին Փրկչի Ս. Յարութեան տօնի առթիւ:

ԱԴԱՆԱ

Ամենապատիւ Սահակ Կաթուղիկոսին Կիլիկիոյ

Շնորհաւորելով Ձեզ և Կիլիկեան հօտին Փրկչի Յարութիւնը, ցանկանում ենք Ձեզ կատարեալ յաջողութիւն և Ձեր հօտին բարօրութիւն։

ԵՐՈՒՍԱՂԷՄ

Ամենապատիւ Յարութիւն Պատրիարքին.

Փրկչի Ս. Յարութեան տօնի հետ շնորհաւորելով և Ձեր անուանակոչութիւնը, ցանկանում ենք Ձեզ երկար տարիներ և կարգութիւն, իսկ Երուսաղէմի ամբողջ միաբանութեան՝ սէր և խաղաղութիւն։

Կ. ՊՕԼԻՍ

Ամենապատիւ Օրմանեան Պատրիարքին.

Աստուծոյ ողորմութեամբ առողջ վիճակով շնորհաւորում ենք Ձեզ և Ձեր կղերականաց՝ որպէս և համայն Թուրքիոյ հայ հօտին Քրիստոսի Ս. Յարութիւնը, մաղթելով խաղաղութիւն մեր ս. եկեղեցուն և Փրկչի հովանին՝ մեր հօտի վրայ։

ՄՏԱՑՈՒԱԾ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Կիլիկիոյ Տ. Սահակ կաթուղիկոսից.

Յայտնում եմ որդիական շնորհակալութիւններս և փոխադարձաբար կը շնորհաւորեմ Ս. Զատիկը, մաղթելով Ձերդ Վեհափառութեան՝ երկարակեցութիւն և Ձեր գործոց՝ յաջողութիւն։

Ամենապատիւ Տ. Յարութիւն Պատրիարքից.

Խորին ակնածութեամբ անհունս շնորհակալ եմ, և իմ և միաբանութեանս կողմից կը շնորհաւորեմ մեր Փրկչի պանծալի ս. Յարութիւնը։ Սրբութեանդ օրհնութիւնը կը հայցենք մեր ընտիր փափագների իրականացման համար։

Պօլսոյ Ամենապատիւ Պատրիարք Օրմանեանից.

Որդիական խոնարհութեամբ շնորհաւորում ենք Սրբութեանդ Ս. Զատիկը։

Աղգիս Վեհափառ Ծերունազարդ Հայրապետն յայտնում է իւր շնորհակալութիւններն և օրհնում այն բոլոր անձանց և հաստատութիւններն, որոնք կատարել էին իրենց որդիական պարտիքն ու շտապել շնորհաւորել նորին Վեհափառութեան՝ Քրիստոսի հրաշալի Յարութիւնը։

**

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

Ա.

ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀ ՀՅԱՐԱՊԵՏԻ

Հայրապետական տնօրէնութիւնք.

Կոնդակ յանուն վիճ. Կոնսիստորիային Երևանայ, որով պատուիրեցաւ առնուլ մուրհակ ի դանձապահէ Հոգ. Կառավարութեան Կարուց վասն վատնեալ գրամոց Աստենին և պարտաւոր կացուցանել զնա՝ յընթացս չորից ամաց վճարել զպարտիսն։ Թ. 226։

— Յանուն նոյն Կառավարութեան, որով լուծանելով զպսակ վերաբնակչուհւոյ ի Խաստուր գեղջ Մարգարտի Յարոյեան ընդ առն բոզոքական Վարդանայ Սհոյեան, թոյլատրի կնոջն յետ եռամսեայ ապաշխարանաց պսակիլ ընդ ապօրինի կենակցին իւրում, իսկ զայրն մերժելով յեկեղեցւոյ հայոց, արգելուլ նմա պսակիլ ընդ այլում։

— Յանուն Առաջնորդին հայոց Նոր Նախիջևանի և Բեսարաբիոյ, որով պատուիրեցաւ կարգադրել տալ Տ. Մուշէ վարդապետին ի տարին 500 ռուբլի.— 300 յեկեղեցւոյն Ս. Պետերբուրգի և 200 յեկեղեցւոյն Մոսկվայի։ Թ. 234։